RRF RETURN AND REINTEGRATION FACILITY

RRF@icmpd.org
www.reintegrationfacility.eu

Վերադարձի և վերաինտեգրման օժանդակություն

Ստեղծելով կամուրջներ՝ կայուն վերադարձի և վերաինտեգրման համար

2022 — հուլիս

2026 — հունիս

Վերադարձի և վերաինտեգրման օժանդակությունը աջակցում է ԵՄ անդամ և Շենգենյան համաձայնագրով ասոցիացված երկրներին վերադարձի և վերաինտեգրման ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու համար: Վերադարձի և վերաինտեգրման օժանդակության ծրագիրը գործառնական և ֆինանսական աջակցություն է տրամադրում Համաձայնագրով ասոցիացված անդամ երկրներին, այդպիսով նպաստելով վերադարձի և վերաինտեգրման ոլորտում ԵՄ հավելյալ կարևորություն ունեցող գործողությունների մշակմանը՝ միաժամանակ կամրջելով առկա նախաձեռնությունների միջև բացերը: Զուգահեռաբար, Վերադարձի և վերաինտեգրման օժանդակության ծրագիրը աջակցում է ԵՄ Կամավոր վերադարձի և վերաինտեգրման օժանդակության ռազմավարությանը:

Օժանդակության ծրագրի ղեկավարման կոմիտեն՝ կազմված Անդամ երկրների ներկայացուցիչներից, Frontex և DG HOME ծրագրերից, ապահովում է ծրագրի ընդհանուր ռազմավարական ուղղորդումը, իրականացումը և ղեկավարումը: Ծրագրի ղեկավարման կոմիտեն նախագահում է տարեկան սկզբունքով ընտրված Անդամ երկիրը: Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը ունի քարտուղարի դեր՝ ապահովելով տեխնիկական աջակցություն/օգնություն:

KEY FEATURES

- MS AND DEMAND DRIVEN
- RAPID RESPONSE
- INNOVATION HUB
- EVIDENCE-BASED WORKING

Որտե՞ղ ենք մենք աշխատում

Վերադարձի և վերաինտեգրման օժանդակության ծրագիրը աջակցում է Անդամ և ասոցիացված երկրներին՝ վերադարձի և վերաինտեգրման ողջ գործընթացում (կամավոր, թե պարտադրված) ծրագրերի և գործողությունների իրականացմանը:

Անդամ երկրները որոշում են ծրագրի իրականացման աշխարհագրական առաջնահերթությունները: Ըստ Անդամ երկրների առաջնահերթության, Վերադարձի և վերաինտեգրման ծրագիրը գործում է հետևյալ երկրներում՝

Ալբանիա, Հայաստան, Բանգլադեշ, Բենին, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կոտ դ'Իվուար, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Իրաք, Գաբոն, Վրաստան, Գանա, Գվինեա, Մալի, Նիգերիա, Պակիստան, Կոնգոյի Հանրապետություն, Սենեգալ, Տոգո:



Ինչպե՞ս ենք մենք աշխատում

Անդամ երկրները որոշում են Վերադարձի և վերաինտեգրման ծրագրի աշխատանքային օրակարգը և նախաձեռնում են գործընթացը: Անդամ երկրները կարող են առաջ քաշել ծրագրեր և գործողություններ՝ Գաղափարների Հավաքագրման հայտերի միջոցով: Այս գործընթացները ենթադրում են՝

- գիտելիքների և տվյալների ձեռքբերում թեմայի/տարածաշրջանի/վերաինտեգրման պրոֆիլի և այլնի վերաբերյալ,
- թեմայի հետագա մշակման աջակցում,
- իրականացման ամենահարմար եղանակի սահմանում (Անդամ երկրի կողմից ծրագրի իրականացում դրամաշնորհային պայմանագրերի միջոցով կամ անմիջական իրականացում ՄՔՄՄԿ կենտրոնի միջոցով):

Վերադարձի և վերաինտեգրման օժանդակության ծրագիրը բոլոր գործողությունները համակարգում և համաձայնեցնում է իր հիմնական ինստիտուցիոնալ շահագրգիռ կողմերի (DG HOME և Frontex), ինչպես նաև արդեն գոյություն ունեցող նախաձեռնությունների հետ:

Աջակցություն Կամավոր վերադարձի եւ վերաինտեգրման ԵՄ ռազմավարությանը

Համատեղ գործողությունները հեշտացնելու նպատակով, վերաինտեգրման դեպքերի համար Եվրոպական հանձնաժողովը ստեղծել է թվային հարթակ (RIAT): Frontex-ը օգտագործում է RIAT հարթակը իր Frontex վերաինտեգրման ծրագրերի համար: Վերադարձի և վերաինտեգրման օժանդակության ծրագիրը նպաստում է RIAT հարթակի հետագա զարգացմանը և տրամադրում է տեխնիկական աջակցություն Անդամ երկրներին:

Գիտելիք

Ինչքան լավ ծրագրերն ու գործողությունները կապվեն վերադարձի իրականացման հետ, այնքան ավելի արդյունավետ կլինեն դրանց արդյունքները: Այս նպատակով Վերադարձի և վերաինտեգրման ծրագրի կարևոր կետերից մեկը գիտելիքի ղեկավարումն է. այն է՝ գիտելիքի ներդրում ծրագրի մշակման և իրականացման տարբեր փուլերում:

- Ծրագրի զարգացում՝ **համատեքստային վերլուծություն** ըստ առկա գիտելիքի, կարողության և ցանցերի,
- Ծրագրի իրականացում՝ ընդհանուր ծրագրային ցուցանիշներ և ծրագրի հատուկ ցուցիչներ ստացված **մոնիտորինգային արդյունքներից**, ինչը թույլ է տալիս բացահայտել քաղված դասերը,
- ապացույցների վրա հիմնված նախագծի ցիկլ՝ ստացված բոլոր գիտելիքներն ու դասերը օգտագործել հետագա ծրագրերի մշակման մեջ:

Վերադարձի և վերաինտեգրման ծրագերի և գործողությունների արդյունքում ստացված գիտելիքը կտարածվի էլեկտրոնային ուսուցման համակարգերի միջոցով, վերադարձի և վերաինտեգրման խորհրդատուների հետ համագործակցության, կայքէջերի թարմացման և այլ միջոցներով:

Funded by

Implemented by

ICMPD
International Centre for Migration Policy Development